ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МАРЗ АРМАВИР
ОБШИНА БАМБАКАШАТ

« 01» Փետրվարի 2012թ. Թիվ 11

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊՐՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Մեծարգո պարոն Ղահրամանյան*

Ձեզ ենք ներկայացնում Բամբակաշատ համայնքի ավագանու 2012 թվականի հունվարի 26-ի 1-ին նիստի որոշումները:

*Առդիր 10 թերթ:*

*ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՅԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 960-12
02 02 2012 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

«26 » Հունվարի 2012 թ. — ԹԻՎ 01

*ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

## ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ավագանու նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1. Ալեքսանյան Նաիրի | ................. | ................. | ................. |
| 2. Ազարյան Մուշեղ | ................. | ................. | ................. |
| 3. Բարեղամյան Ռուբեն | ................. | ................. | ................. |
| 4. Բաղդասարյան Ռուբիկ | ................. | ................. | ................. |
| 5. Ղարիբյան Լևոն | ................. | ................. | ................. |
| 6. Մկրտչյան Նորիկ | ................. | ................. | ................. |
| 7. Սարգսյան Արա | ................. | ................. | ................. |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2012 թվականի հունվարի 26
գ.Բամբակաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ 01 ՈՐՈՇՄԱՆ

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ՆԻՍՏԻ

1. ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 –Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

«26» Հունվարի 2012 թ. ԹԻՎ 02-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով , 69-րդ հոդվածով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով

## ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի 2011 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1.Ալեքսանյան Նաիրի | ................... | ................... | ............... |
| 2.Ազարյան Մուշեղ | ................... | ................... | ............... |
| 3.Բարեղամյան Ռուբեն | ................... | ................... | ............... |
| 4.Բաղդասարյան Ռուբիկ | ................... | ................... | ............... |
| 5.Ղարիբյան Լևոն | ................... | ................... | ............... |
| 6.Մկրտչյան Նորիկ | ................... | ................... | ............... |
| 7.Սարգսյան Արա | ................... | ................... | ............... |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2012 թվականի հունվարի 26
գ.Բամբակաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ 02-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ

### Եկամուտներ

Բամբակաշատի գյուղական համայնքի 2011 թվականի վարչական բյուջեն ըստ եկամուտների կատարվել է՝

1. Հարկային եկամուտներ՝

Հարկային եկամուտների գծով նախատեսված 21128.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 17253.8 հազ. դրամ, կամ կատարվել է 81.7 % ով:

Հողի հարկ՝ որի գծով նախատեսված 14791.0 հազ. դրամից փաստացի մուտքագրվել է 13986.5 հազ. դրամ, որը կազմում է 94.6 % և գույքահարկ՝ այդ թվում՝ փոխադրամիջոցների գույքահարկի գծով նախատեսված 5077.0 հազ. դրամից փաստացի մուտքագրվել է 3171.1 հազ. դրամ, որը կազմում է 60.5 %, շենք-շինությունների գույքահարկի գծով նախատեսված 1260.0 հազ. դրամից փաստացի մուտքագրվել է 96.2 հազ. դրամ, որը կազմում է 7.6 %:

2. Տեղական տուրքեր՝

Տեղական տուրքերի գծով նախատեսված 665.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 180.0 հազ. դրամ, կամ կատարվել է 27.0 % ով:

3. Այլ եկամուտներ՝

Այլ եկամուտների գծով նախատեսված 3701.6 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1480.4 հազ. դրամ, կամ կատարվել է 40 % ով, այդ թվում՝

գույքի վարձակալության եկամուտների գծով նախատեսված 1834.8 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 139.7 հազ. դրամ, կամ կատարվել է 7.6 % ով,

վարչական գանձումների գծով նախատեսված 1566.8 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1040.7 հազ.դրամ, կամ կատարվել է 66.4%, պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցների գծով նախատեսված 300.0 հազ. դրամի դիմաց փաստացի տրամադրվել է 300.0 հազ. դրամ, որը կազմում է 100 %:

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան 24205.4 հազ. դրամի չափով տրամադրվել է ամբողջությամբ:

Ֆոնդային բյուջեով նախատեսվել է հողի օտարումից եկամուտ 1500.0 հազ. դրամ, որի դիմաց փաստացի մուտքագրվել է 1261.2 հազ. դրամ, կամ կատարվել է 84.1 %-ով:

Բամբակաշատ գյուղական համայնքի բյուջեի 2011 թվականի սեփական եկամուտների գծով նախատեսված 25494.6 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 18914.2 հազ. դրամ, կամ կատարվել է 74.2 % -ով:

## Ծախսեր

Բամբակաշատի գյուղական համայնքի 2011 թվականի վարչական բյուջեով նախատեսված 46100.0 հազ. դրամից փաստացի կատարվել է ծախս 39639.6 հազ. դրամ, կամ կատարվել է 86.0 %-ով: Վարչական բյուջեով նախատեսված ծախսերը բաշխվում են՝

*Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ,* որի գծով նախատեսված 23084.0 հազ.դրամից փաստացի կատարվել է ծախս 18402.6 հազ. դրամ կամ կատարվել է 79.7 % -ով, այդ թվում օրենսդիր և գործադիր մարմիններ՝ 01-1-1, որի գծով նախատեսված 20154.0 հազ. դրամից փաստացի կատարվել է ծախս 16368.3 հազ. դրամ կամ կատարվել է 81.2 %-ով: Ընդհանուր բնույթի այլ ծախսեր 01-3-3, որի գծով նախատեսված 450.0 հազ. դրամից փաստացի կատարվել է ծախս 135.8 հազ. դրամ կամ կատարվել է 30.2 %- ով, և ընդհանուր բնույթի հանրային 01-6-1, որի գծով նախատեսված 2480.0 հազ. դրամից փաստացի կատարվել է ծախս 1898.5 հազ. դրամ կամ կատարվել է 76.5 %- ով:

*Տնտեսական հարաբերություններ,* որի գծով նախատեսված 300.0 հազ.դրամից փաստացի կատարվել է ծախս 300.0 հազ. դրամ կամ կատարվել է 100 % -ով, այդ թվում՝ գյուղատնտեսություն՝ 04-2-1, որի որի գծով նախատեսված 300.0 հազ. դրամից փաստացի կատարվել է ծախս 300.0 հազ. դրամ կամ կատարվել է 100 % -ով, Ճանապարհային տրանսպորտ՝ 04-5-1,նախատեսվել է 6200.0 հազ.դրամ, փաստացի ծախս չի կատարվել:

*Շրջակա միջավայրի պաշտպանության,* այդ թվում՝ աղբահանության՝ 05-1-1 գծով նախատեսվել է 380.0 հազ. դրամ, որի դիմաց փաստացի ծախս չի կատարվել:

*Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության* գծով նախատեսված 10850.0 հազ.դրամից փաստացի կատարվել է ծախս 10199.7 հազ. դրամ կամ կատարվել է 94.0 % -ով, այդ թվում՝ ջրամատակարարում՝ 06-3-1, որի գծով նախատեսված 9250.0 հազ. դրամ, փաստացի ծախսվել է 8999.7 հազ. դրամ կամ կատարվել է 97.3 % -ով և փողոցային լուսավորություն՝ 06-4-1, որի որի գծով նախատեսված 1600.0 հազ. դրամից փաստացի կատարվել է ծախս 1200.0 հազ. դրամ կամ կատարվել է 75 % -ով:

*Հանգիստ , մշակույթ և կրոնի* գծով նախատեսված 4604.5 հազ.դրամից փաստացի կատարվել է ծախս 4219.5 հազ. դրամ կամ կատարվել է 91.6 %-ով, այդ թվում՝

գիտադարանային ծառայություններ՝ 08-2-1, որի գծով նախատեսված 1503.0 հազ. դրամից փաստացի ծախսվել է 1293.0 հազ. դրամ կամ կատարվել է 86 % -ով, մշակույթի տներ, ակումբներ՝ 08-2-3, որի գծով նախատեսված 801.5 հազ. դրամից փաստացի ծախսվել է 646.5 հազ. դրամ կամ կատարվել է 80.7 %-ով, այլ մշակութային կազմակերպություններ՝ 08-2-4 որի գծով նախատեսված 2300.0 հազ. դրամից փաստացի ծախսվել է 2280.0 հազ. դրամ կամ կատարվել է 99.1 % -ով:

*Նախադպրոցական կրթություն*՝ 09-1-1, որի գծով նախատեսված 701.5 հազ. դրամից փաստացի ծախսվել է 637.8 հազ. դրամ կամ կատարվել է 90.9 % -ով:

*Սոցիալական պաշտպանության* գծով նախատեսվել է 6180.0 հազ. դրամ, փաստացի ծախսվել է 5880.0 հազ. դրամ կամ կատարվել է 95.1 % -ով:

Ֆոնդային բյուջեով նախատեսվել է 24264.0 հազ. դրամ, փաստացի ծախսվել է 19284.6 հազ. դրամ կամ կատարվել է 79.5 % -ով, այդ թվում՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ, որի գծով նախատեսված 1441.0 հազ. դրամից փաստացի կատարվել է ծախս 1341.0 հազար դրամ կամ կատարվել է 93.1 %-ով, այդ թվում՝ օրենսդիր և գործադիր մարմիններ՝ 01-1-1, որի գծով նախատեսված 500.0 հազ. դրամից փաստացի կատարվել է ծախս 400.0 հազ. դրամ կամ կատարվել է 80 %- ով, և ընդհանուր բնույթի հանրային 01-6-1, որի գծով նախատեսված 941.0 հազ. դրամից փաստացի կատարվել է ծախս 941.0 հազար դրամ կամ կատարվել է 100 %-ով, ջրամատակարարում՝ 06-3-1, որի գծով նախատեսված 6500.0 հազ. դրամ, փաստացի ծախսվել է 3000.0 հազ. դրամ կամ կատարվել է 46.1 % -ով, գրադարանային ծառայություններ՝ 08-2-1, որ գծով նախատեսված 100.0 հազ. դրամից փաստացի ծախս չի կատարվել, նախադպրոցական կրթություն ՝ 09-1-1, որի գծով նախատեսված 16223.0 հազ. դրամ, փաստացի ծախսվել է 14943.6 կամ կատարվել է 92.1 %-ով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

# ՈՐՈՇՈՒՄ

«26» Հունվարի 2012 թ. ԹԻՎ 03-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 –ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-րդ մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

## ՈՐՈՇԵՑ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1/ Հաստատել տարեսկզբի ազատ մնացորդը՝ վարչական բյուջեով 3550.9 հազ. դրամ, և ֆոնդային բյուջեով 1140.7 հազ. դրամ:

2/ Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը ուղղել ֆոնդային բյուջե՝ 3550.9 հազ. դրամ:

Ընդհամենը՝ ֆոնդային բյուջե 4691.6 հազար դրամ:

Նախատեսել՝

01 բաժին 1 խմբի 1 դասի 5113 հոդվածին նախատեսել 330.0 հազ. դրամ,

06 բաժին 3 խմբի 1 դասի 5113 հոդվածին նախատեսել 3000.0 հազ. դրամ,

08 բաժին 2 խմբի 1 դասի 5132 հոդվածին նախատեսել 100.0 հազ. դրամ,

09 բաժին 1 խմբի 1 դասի 5113 հոդվածին նախատեսել 1261.6 հազ.դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1. Ալեքսանյան Նաիրի | ................... | ................... | ............... |
| 2. Ազարյան Մուշեղ | ................... | ................... | ............... |
| 3. Բարեղամյան Ռուբեն | ................... | ................... | ............... |
| 4. Բաղդասարյան Ռուբիկ | ................... | ................... | ............... |
| 5.Ղարիբյան Լևոն | ................... | ................... | ............... |
| 6.Մկրտչյան Նորիկ | ................... | ................... | ............... |
| 7.Սարգսյան Արա | ................... | ................... | ............... |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2012 թվականի հունվարի 26
գ.Բամբակաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

«26» Հունվարի 2012 թ. Թիվ 04

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով

## ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել՝ Հայստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի 2012 թվականի ավագանու հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը՝ հետևյալ կառուցվածքով.

| | |
|---|---|
| 1-ին նիստը անցկացնել | 26.01.2012 թվականին |
| 2-րդ նիստը անցկացնել | 26.03.2012 թվականին |
| 3-րդ նիստը անցկացնել | 25.05.2012 թվականին |
| 4-րդ նիստը անցկացնել | 26.07.2012 թվականին |
| 5-րդ նիստը անցկացնել | 26.09.2012 թվականին |
| 6-րդ նիստը անցկացնել | 26.11.2012 թվականին |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1. Ալեքսանյան Նաիրի | ................ | ................ | ................ |
| 2. Ազարյան Մուշեղ | ................ | ................ | ................ |
| 3. Բարեղամյան Ռուբեն | ................ | ................ | ................ |
| 4. Բաղդասարյան Ռուբիկ | ................ | ................ | ................ |
| 5. Ղարիբյան Լևոն | ................ | ................ | ................ |
| 6.Մկրտչյան Նորիկ | ................ | ................ | ................ |
| 7.Սարգսյան Արա | ................ | ................ | ................ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2012 թվականի հունվարի 26
գ.Բամբակաշատ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

«26» Հունվարի 2012 թ. ԹԻՎ 05

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի վարչական տարածքի 2012 թվականի առկա անասնագլխաքանակի հաշվառման արդյունքները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1. Ալեքսանյան Նաիրի | ……………… | ……………… | …………… |
| 2. Ազարյան Մուշեղ | ……………… | ……………… | …………… |
| 3. Բարեղամյան Ռուբեն | ……………… | ……………… | …………… |
| 4. Բաղդասարյան Ռուբիկ | ……………… | ……………… | …………… |
| 5. Ղարիբյան Լևոն | ……………… | ……………… | …………… |
| 6. Մկրտչյան Նորիկ | ……………… | ……………… | …………… |
| 7. Սարգսյան Արա | ……………… | ……………… | …………… |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2012 թվականի հունվարի 26
գ.Բամբակաշատ